



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 132-Ա
ք. Երևան

«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՖԼԱՅՆԵՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Բավարարել «ՖԼԱՅՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաադրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«MTV» «Paramount Comedy» «MTV Hits» «MTV Dance» «VH1 Classic» «Nickelodeon»	անժամկետ
«National Geographic» «Nat Geo Wild» «Fox»	անժամկետ